ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 մայիսի 2012թ. **N 265-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի «2012 թվականի մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրության արդյունքների վերաբերյալ» թիվ 264-Ա որոշումը.

և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ են ընտրվել.

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝ 28 պատգամավոր,

«Ժառանգություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր,

Հայ Ազգային կոնգրես կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝ 7 պատգամավոր,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր,

Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից՝ 40 պատգամավոր,

«Օրինաց երկիր» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**